ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/41725/02/23*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2023 թվականի դեկտեմբերի 20-ին քաղաք Երևան

քննարկելով «Վ.Ն.Ա ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդան Քալաշյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«Վ.Ն.Ա ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդան Քալաշյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Տաշիր Լոռու Մարզի Տաշիրի համայքապետարան՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայքի ղեկավարի տեղակալի 25.09.2023 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին N 968-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) գրասենյակ է մուտքագրվել 05.12.2023 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 07.12.2023 թվականին:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 12.12.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ հայցադիմումում որպես պատասխանող ՀՀ Տաշիր Լոռու Մարզի Տաշիրի համայքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեի բացակայության մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել այն:

15.12.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված թիվ Մ-6462/23 լիազորագիր):

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «Վ.Ն.Ա ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդան Քալաշյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ Տաշիր Լոռու Մարզի Տաշիրի համայքապետարանը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

ԱՌԱՋԻՆ ԱՏԵԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

ՈՐՈՇԵՑ

1. «Վ.Ն.Ա ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդան Քալաշյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ Տաշիր Լոռու Մարզի Տաշիրի համայքապետարանից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ Տաշիր Լոռու Մարզի Տաշիրի համայքապետարանն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**